02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

31 (1430) • 23 օգոստոսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Օպերատիվ խորհրդակցություն

Օգոստոսի 17-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը: Օպերատիվ խորհրդակցությանը մասնակցում էին ոստիկանության պետի տեղակալները, կենտրոնական ապարատի, մարզային ստորաբաժանումների ղեկավարները նաեւ սպայական առաջին ուսադիրներն ստանալու եւ պարգեւատրման համար ներկայացած ծառայողներ:

Ողջունելով ներկաներին՝ Վալերիյ Օսիպյանը շնորհավորեց կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող այն վեց ծառայողներին, ովքեր առաջխաղացման կարգով նշանակվել էին սպայական կազմի պաշտոններում՝ ստանալով լեյտենանտի կոչում: Առաջին սպայական ուսադիրները ծառայողներն անձամբ ստացան ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանից:

2019 թվականի առաջին կիսամյակի օպերատիվ-ծառայողական գործունեության ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու համար տարբեր ստորաբաժանումների տասը ծառայողներ արժանացան մեդալների, կրծքանշանների ու պատվոգրերի:

«Այսօր ծառայողն առաջխաղացման կամ պարգեւատրման է արժանանում բացառապես իր գիտելիքների, իր աշխատանքի շնորհիվ՝ առանց որեւէ մեկի միջնորդության ու հովանավորության: Բարեխիղճ աշխատանքն ու մասնագիտական որակներն են առաջխաղացման գրավականը»,- ասաց Վալերիյ Օսիպյանը:

Շնորհավորելով պարգեւատրվողներին եւ մաղթելով բարի ծառայություն՝ ոստիկանության պետը շարունակեց խորհրդակցությունը:

էջ 2

Սպանությունը բացահայտվեց

Հուլիսի 2-ի գիշերը Նոր Նորքի 5-րդ զանգվածի շենքերից մեկի բակում սպանվել էր 46-ամյա Անդրանիկ Հարությունյանը:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Երեւան քաղաքի վարչությունների, Նոր Նորքի բաժնի ծառայողների ու Երեւան քաղաքի քննչական վարչության ՕՀՔ բաժնի աշխատակիցների ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների շնորհիվ հանցագործությունը բացահայտվեց:

Պարզվել է, որ սպանությունը կատարել է 32-ամյա ՌԴ քաղաքացի, իսկ հանցագործությունը կատարելուն օժանդակել է Երեւանի 50-ամյա մի բնակիչ, որը բերման է ենթարկվել ու ձերբակալվել:

Ձեռնարկվում են միջոցառումներ սպանությունը կատարած անձին եւ հանցագործության գործիք հրազենը հայտնաբերելու ուղղությամբ:

Քննությունը շարունակվում է:

Կոչմանն արժանի կրթօջախ

2019-2020 թթ. ուսումնական տարվա ընդունելությանը ոստիկանության կրթահամալիրի դիմորդների զգալի աճ գրանցվեց: Այսպես՝ ակադեմիայում առկա անվճար ուսուցման համար այս տարի դիմել է 104 մարդ՝ նախորդ տարվա 78-ի համեմատ, վճարովի ուսուցման համար դիմել է 67 դիմորդ՝ նախորդ տարվա 46-ի դիմաց, քոլեջ դիմել է 82 դիմորդ՝ նախորդ տարվա 65-ի դիմաց, ասպիրանտուրա՝ 6 մարդ՝ նախորդ տարվա 2-ի դիմաց:

Ի դեպ, կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման համար դիմողներից 54-ը, որոնցից 11-ը՝ գերազանց գնահատականներով, արդեն համալրել են կրթահամալիրում սովորողների շարքերը. նախորդ տարի ընդունվել էր 27 մարդ:

էջ 2

Սպանություն Պուշկինոյում

Օգոստոսի 17-ին, ժամը 23.30-ին, ԱԻՆ Լոռու մարզի փրկարարական վարչության «911» ծառայությունից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ Պուշկինո գյուղում տուն է այրվում:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ այրվել է 1973 թ. ծնված Ժիրայր Բասմաջյանի՝ Պուշկինո գյուղի ամառանոցը, իսկ ամառանոցի խոհանոցում հայտնաբերվեց տանտիրոջ կիսամոխրացած դիակը:

Դիակը օգոստոսի 18-ին նախնական զննության ենթարկվեց փորձագետի կողմից. պարզվեց, որ դիակի վրա առկա են բազմաթիվ կտրած-ծակած վերքեր: Նույն օրը քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի եւ 185 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվեց քրեական գործ:

Ոստիկանության Լոռու մարզային վարչության, Ստեփանավանի բաժնի եւ Ստեփանավանի քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ օգոստոսի 17-ին, ժամը 22.00-ի սահմաններում, ամառանոցում Ժիրայր Բասմաջյանը եւ Գարգառ գյուղի քսանամյա մի բնակիչ անձնական հարցեր պարզաբանելիս վիճաբանել են, որի ընթացքում փոխադարձ քաշքշել եւ խփել են իրար, ապա երիտասարդը վերցնելով դանակը՝ բազմաթիվ հարվածներ է հասցրել Բասմաջյանի մարմնին եւ սպանել նրան: Հանցագործության հետքերը վերացնելու նպատակով բենզինով հրկիզել է դիակը եւ ամառանոցը: Այնուհետեւ իրենց տանը հագուստը փոխել է, արյունոտ հագուստը եւ կոշիկները դրել է պոլիէթիլենային տոպրակի մեջ եւ նետել Գարգառ գյուղի մոտով հոսող Չայլաղ գետը:

Կատարված քննչական փորձարարության եւ որոնողական միջոցառումների արդյունքում հրկիզված ամառանոցում, կիսայրված վիճակում, հայտնաբերվեց հանցագործության գործիք խոհանոցային դանակը, որի շեղբի վրա առկա էին արնանման հետքեր:

Երիտասարդը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Ոստիկանները կանխեցին զինված բախումը

Օգոստոսի 15-ին ոստիկանությունում օպերատիվ տվյալներ ստացվեցին, որ Երկաթուղայինների 1 հասցեում հավաքվել են մի խումբ անձինք, որոնց մոտ զենք կա, եւ հնարավոր է՝ զինված բախում լինի:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ էրեբունու բաժնի ծառայողներն անմիջապես իրականացրին անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում բերման ենթարկվեցին Երեւանի եւ Բյուրեղավանի տասներեք բնակիչ: Հնարավոր հետագա զարգացումները կանխվեցին:

Բյուրեղավանի 34-ամյա բնակչի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց կանեփանման դեղնականաչավուն զանգվածով կաթուցիչ: Նրանց հավաքատեղիից հայտնաբերվեց առանց գործարանային համարի երկու «Մակարով» ատրճանակ՝ լիցքավորված 7 եւ 8 փամփուշտներով:

Հարուցվել է քրեական գործ:

Յուրացման դեպքը բացահայտվեց

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Գեղարքունիքի մարզային վարչության եւ Վարդենիսի բաժնի ծառայողների փոխգործակցության շնորհիվ Վարդենիսում առանձնապես խոշոր չափերի յուրացման դեպք է բացահայտվել:

Պարզվել է, որ Ծովակ համայնքի դպրոցի նախկին տնօրենը, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, 2014 թ. հունվարի 1-ին դպրոցի փոխտնօրեն է հրամանագրել որդուն, որը չի ներկայացել աշխատանքի, իսկ նրա անվամբ դուրս գրված ընդհանուր 18 միլիոն 400 հազար դրամ աշխատավարձը յուրացվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Դրամանենգություն

Հին հայկական օրենքներով՝ ապօրինի դրամ հատողները դատապարտվել են մահապատժի, ցմահ տաժանակրության:

էջ 2

Օրենք եւ զարմանք

Տարբեր երկրներում երբեմն հանդիպում են այնպիսի նորմատիվ ակտեր, որոնք պարզապես զարմանք են հարուցում:

էջ 5

Վնասանգ շրջադարձ

Շրջադարձ կատարելու ժամանակ գլխավորն անվտանգ պահի եւ տեղի ընտրությունն է, վարորդի զգոնությունը:

էջ 7

Օպերատիվ խորհրդակցություն

Սկիզբը՝ էջ 1

Վալերիյ Օսիպյանը անդրադարձավ 2019 թվականի առաջին կիսամյակում արձանագրված ցուցանիշներին:

Վերլուծելով հանրապետության օպերատիվ իրավիճակը՝ ոստիկանության պետը հանցագործությունների նախականխման, կանխման եւ բացահայտման ուղղությամբ տվեց կոնկրետ ցուցումներ: Մասնավորապես հանձնարարվեց տիրապետել սպասարկվող տարածքի օպերատիվ իրավիճակին, բնակիչների հետ պարբերաբար հանդիպումներ կազմակերպելով՝ ամրապնդել ոստիկանություն-հասարակություն կապը, առավել ուշադիր ծառայել բոլոր այն վայրերում, որտեղ կան ռիսկային օբյեկտներ, հասարակական կարգը խախտող քաղաքացիների, կարգազանց վարորդների նկատմամբ լինել խիստ եւ սկզբունքային:

«Անհրաժեշտության դեպքում օրենքը թույլ է տալիս նաեւ ֆիզիկական ուժ գործադրել, սակայն ֆիզիկական ուժի կիրառումը պետք է տարբերել բռնությունից: Իսկ եթե կլինեն կաշկանդված ոստիկաններ, որոնք իրենց անգործությամբ կասկածի տակ կդնեն ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը, այդ ոստիկանները իրենց վերադասների հետ կպատժվեն խստորեն»,- ասաց Վալերիյ Օսիպյանը:

Ոստիկանության պետը ճանապարհային ոստիկանության ղեկավարներին ցուցում տվեց լինել խիստ՝ մեքենայից աղբ, մասնավորապես՝ ծխախոտի մնացորդ նետող քաղաքացիների նկատմամբ, որոնց արարքը կարող է հրդեհի պատճառ դառնալ:

Ամփոփիչ խոսքում ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը անդրադարձավ նաեւ ապօրինի որսի, անօրինական ծառահատումների դեմ պայքարի խնդիրներին:

Խորհրդակցության ավարտին ոստիկանության պետը կոնկրետ ցուցումներ եւ հանձնարարականներ տվեց ստորաբաժանումների ղեկավարներին:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Դրամանենգություն

Սովետական Հայաստանում քրեորեն հետապնդվում էին միայն կեղծ փողեր պատրաստողները եւ իրացնողները, իսկ ներկայիս գործող քրեական օրենսգրքով հանցագործություն է համարվում նաեւ դրանք պահելը: Ի դեպ, փողի ամեն կեղծում չէ, որ կարող է դիտվել որպես հանցագործություն: Ոտնձգության առարկա են շրջանառության մեջ գտնվող փողերը եւ արժեթղթերը: Այսինքն՝ եթե դրանք արդեն հանված են շրջանառությունից, չի կարող դիտվել որպես հանցագործություն:

Հաճախ դրամանենգությունը շփոթում են խարդախության հետ: Սակայն դրանք տարբեր հանցագործություններ են:

Պետք է զգուշանալ նաեւ կեղծ արժեթղթերից կամ վիճակախաղի տոմսերից: Եթե իրացնելու նպատակով կեղծում են վիճակախաղի տոմսը, բնականաբար, գործ ունենք դրամանենգության հետ, իսկ եթե նույն վիճակախաղի տոմսը կեղծում են «շահում» ապահովելու համար, ապա այստեղ գործ ունենք խարդախության հանցակազմի հետ:

Մարդիկ, որոնք առուվաճառքի ընթացքում կամ այլ իրավիճակներում ստացել են կեղծ փող եւ անտեղյակ լինելով՝ իրացրել, չեն ենթարկվում քրեական պատասխանատվության: Արարքը կարող է քրեորեն հետապնդելի լինել այն դեպքում, երբ անձը գիտակցել է, որ իր մոտ եղած դրամը կեղծ է, կանխատեսում է դրա վտանգավոր հետեւանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածը սահմանում է՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր՝ իրացնելու նպատակով պատրաստելը, պահելը կամ դրանք իրացնելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով: Եթե նույն արարքը կատարվել է խոշոր չափերով եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ազատազրկումը սահմանվում է 6-10 տարի ժամկետով, իսկ առանձնապես խոշոր չափերի դեպքում՝ 8-12 տարի ժամկետով:

Կեղծ փողերի իրացում է համարվում դրանք շրջանառության մեջ դնելը՝ գնումներ կատարելու, փոխանակելու, փոխանցելու, նվիրելու կամ մեկ այլ եղանակով ուրիշին

հանձնելու ճանապարհով: Հանցագործության այս տեսակը ավարտված է համարվում թեկուզեւ մեկ մետաղադրամ, թղթադրամ, արժեթուղթ իրացնելու նպատակով պատրաստելու, պահելու կամ իրացնելու պահից:

Ոստիկանությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ մի քաղաքացի ունի կեղծ թղթադրամներ ու մետաղադրամներ, որոնք իրացնում է Հայաստանի տարբեր քաղաքներում:

Չեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվեց, որ այդ անձը Տիգրան Եղոյանն է, որը վարձակալական հիմունքներով բնակվում է Երեւանի տարբեր հասցեներում:

Կեղծ թղթադրամներ ու մետաղադրամներ պատրաստելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով բերման ենթարկված երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին 10 հազար դրամ անվանական արժեքով ՀՀ կեղծ թղթադրամներ: Նրա մատնանշած վայրից ոստիկանները հայտնաբերեցին ինքնաշեն դրամահատ սարք, հումք, պարագաներ, որոնք անհրաժեշտ էին կեղծ դրամ պատրաստելու համար:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Սեւանի թերակղզու ռեստորանային համալիրներից մեկում 500 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամ է իրացվել:

ԿՀԴՊ գլխավոր վարչության քրեական հետախույզները, համագործակցելով ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողների հետ, պարզեցին դեպքի մի շարք հանգամանքներ: Հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին անձինք: Հարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկություններ կատարվեցին: Բերման ենթարկվածներից մեկի բնակարանում հայտնաբերվեցին ծխախոտի տուփերով մարիխուանայի նմանվող զանգվածներ, ատրճանակ:

Փաստով հարուցվել է քրեական գործ:

Դրամանենգությունը քաղաքակրթության պատմության չափ հին է եւ բոլոր հասարակարգերում, երկրներում դիտվել է որպես հանցագործություն: Այն տարածված է եղել հին եւ միջնադարյան Հայաստանում, նաեւ՝ Կիլիկիայում: Վիեննայում, Վենետիկի Մխիթարյան միաբանության թանգարանում, էրմիտաժում պահվող Կիլիկիայի թագավոր Լեւոն Ա-ին վերագրվող պղնձե եւ արծաթե դրամների զգալի մասը, պարզվել է, կեղծ է:

Հայկական օրենքներով՝ ապօրինի դրամ հատողները դատապարտվել են մահապատժի, ցմահ տաժանակրության, ենթարկվել են անդամախեղման: Խորհրդային Միությունում դրամանենգությունը համարվում էր պետական հանցագործություն, պատիժը խիստ էր, հանցագործները նույնիսկ ենթարկվում էին մահապատժի:

Փողը յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգի հիմքն է: Կեղծ փողերն օգտագործվում են որպես զարգացող երկրի տնտեսության խափանման միջոց: Հանցագործության այս տեսակի դեմ պայքարը երբեւիցե չի կորցրել իր հրատապությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Չարաշահումներ Արագածոտնի մարզում

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, Արագածոտնի մարզային վարչության եւ Թալինի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, առանձնապես խոշոր չափերի յուրացման կամ վատնման առերեւույթ հանցագործության դեպք են բացահայտել:

Ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ Արագածոտնի մարզի Թաթուլ համայնքի ղեկավարը, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, 2014 թվականի դեկտեմբերին «Թաթուլ համայնքի արոտօգտագործողների միավորում» կոոպերատիվին համայնքի բյուջեից փոխատվությամբ տրամադրել է 3 միլիոն 550 հազար դրամ՝ 2018-2020 թթ. ընթացքում համայնքի բյուջե վերադարձնելու պայմանով, բայց մինչ օրս որեւէ գումար չի վերադարձվել: Բացի այդ, 2015 թ. հունվարի 22-ին նույն կոոպերատիվին 2015-2017 թթ. ընթացքում փոխատվությամբ հատկացվել է մոտ 11 միլիոն 200 հազար դրամ՝ վեց տարվա ընթացքում մարելու պայմանով, սակայն նույն օրը կազմվել է մեկ այլ կեղծ որոշում՝ հիշյալ կոոպերատիվին նույն ժամանակահատվածում փոխատվությամբ մոտ ինը միլիոն դրամ հատկացնելու մասին:

Տվյալներ են ձեռք բերվել նաեւ, որ 2016 թ. սկսած՝ համայնքապետարանի կողմից համայնքի կարիքների համար «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունից ձեռք բերված խմելու ջրի համար բնակիչներից հավաքագրված գումարների մի մասը համայնքի ղեկավարը յուրացրել է՝ պետությանը պատճառելով զգալի չափերի նյութական վնաս:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ գումարներ յուրացնելու, պաշտոնեական կեղծիք կատարելու եւ կեղծ փաստաթղթեր կազմելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ:

Չեռնարկվում են միջոցառումներ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Դանակահարություն Ադոնցի փողոցում

Օգոստոսի 9-ին հիվանդանոցից ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում էր ստացվել, որ որովայնի կտրած-ծակած վերքով 32-ամյա մի տղամարդ է բուժօգնության տեղափոխվել: Ըստ նախնական տվյալների՝ նրան Ադոնցի փողոցում՝ դանակահարել էին:

Հիվանդանոց մեկնած իրավապահներին տուժողի հետ զրուցել չհաջողվեց. վիրահատում էին: Անհրաժեշտ էր պարզել, թե Ադոնցի փողոցում ինչ էր կատարվել, ով էր դանակահարողը:

Քրեական հետախույզները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Դեպքից ժամեր անց տեղեկություններ ստացվեցին, որ մեքենայի առուվաճառքի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ տուժողին դանակահարել էր Երեւանի Գերցենի փողոցի 23-ամյա մի բնակիչ:

Օգոստոսի 10-ին, հարազատների հետ տարված բացատրական աշխատանքի արդյունքում, կասկածվողը ներկայացավ ոստիկանության Արաբկիրի բաժին: Եվ տվեց ոչ միայն խոստովանական բացատրություն, այլեւ ներկայացրեց դանակը, որով տուժողին մարմնական վնասվածք էր պատճառել:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Կոչման արժանի կրթօջախ

Սկիզբը՝ էջ 1

Ոստիկանությունն այսօր շարունակում է բարեփոխումների ընդգրկուն գործընթացը՝ առաջնորդվելով ժողովրդի հավատն ու վստահությունը ամրապնդելու սկզբունքով: Արդյունքն ակնհայտ է: Դասարակությունն առավել քան երբեւէ վստահում է ոստիկանությանը, համագործակցում: Ոստիկանության կրթահամալիր ընդունվել ցանկացողների՝ վերջին տարիների համեմատությամբ այս տարվա աննախադեպ բարձր ցուցանիշը նաեւ դրա հետեւանք է: Ոստիկանության հեղինակության բարձրացումը չէր կարող դրականորեն չազդել կրթահամալիրի հանրային ընկալման վրա: Մեզ հետ զրույցում նույնը հաստատեց նաեւ կրթահամալիրի պետ Մուշեղ Բաբայանը:

Դարկ է նշել ոստիկանության կրթահամալիրում ուսումնառության գրավչությունն ապահովող մի շարք այլ հանգամանքներ եւս: Մասնավորապես՝ առկա անվճար ուսուցման եւ քոլեջի սովորողներին տրվող նվազագույն աշխատավարձի չափով կրթաթոշակը, շրջանավարտներին որպես ոստիկանության սպա պարտադիր աշխատանքի նշանակելը, իսկ առկա վճարովի ուսուցման շրջանավարտներին ոստիկանության համակարգում համապատասխան պաշտոնների նշանակման նախապատվությունը, հատուկ այնպիսի առարկաների դասավանդումը, որոնք համարժեք այլ բուհերի ուսումնական ծրագրերում ներառված չեն:

Որակյալ կադրերի պատրաստումը միշտ էլ ոստիկանության առանցքային խնդիրներից է: Իսկ ոստիկանության ընդգրկուն բարեփոխումների արդի շրջանում այն հրամայական է, որովհետեւ հանրահայտ ճշմարտություն է՝ կադրերն են որոշում ամեն ինչ: Դենց այս առումով ոստիկանության կրթահամալիրին լուրջ առաքելություն է վերապահված՝ բարձրակարգ կադրեր պատրաստել ոստիկանության գործունեության բոլոր ոլորտների համար:

Կրթության որակի բարձրացում, ուսումնական ծրագրերի արդիականացում, պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործում, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, սովորողների կենցաղային ու սոցիալական խնդիրների լուծում, կրթահամալիրի տարածքի եւ շինությունների բարեկարգում, ներքին կարգապահության ամրապնդում. սրանք գործոններ են, որոնք գրավիչ են դարձնում ոստիկանության կրթահամալիրում սովորելը, կրթահամալիրը դարձնում կոչմանն արժանի կրթօջախ:

Դասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Երբ ոստիկանը բնակիչներից մեկն է

Հանցագործություն բացահայտելը ոստիկանության ուղղակի պարտականությունն է: Ոստիկանության կարեւորագույն խնդիրներից է նաեւ հանցագործությունների նախականխումը, պրոֆիլակտիկան, եւ այստեղ արդեն ոչ մի վիճակագրություն չկա: Ինչ մեթոդով հաշվել, թե անչափահասների շրջանում կատարած բացատրական աշխատանքի արդյունքում քանի պատանի է դարձել գիտակից, քանիսն է հեռու մնացել հանցաշխարհի կեղծ ռոմանտիզմից, քանի ծնող է ավելի ուշադիր ու հոգատար եղել երեխայի հանդեպ ու նրան հեռու պահել վատ շրջապատից, քանի ծեծուկռիվ է կանխվել հանդուրժողականության շնորհիվ: Անհնար է նաեւ պատկերացնել, թե ոստիկանների հետեւողական քարոզչության շնորհիվ քանի հոգի է պատուհանին ճաղավանդակ դրել, ուշադիր եղել քաղաքային տրանսպորտում եւ խուսափել հանցավոր ոտնձգությունից:

Ապացուցված է, որ պրոֆիլակտիկան, նախականխումը հանցագործությունների դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցն են: Բայց ինչ պրոֆիլակտիկա առանց փոխվստահության, առանց հասարակություն-ոստիկանություն ամուր կապի, ու ոչ թե թղթի վրա, որպես քարոզչական պաստառ, այլ իրական վստահություն ու համագործակցություն:

Մարդ նախ վստահում է իր ընտանիքի անդամին, հարեւանին, ընկերոջը, բակի ծանոթին, համայնքի անդամին: Եվ համայնքային ոստիկանի հանդեպ քաղաքացու վստահությունն էլ պետք է լինի որպես բակի ծանոթի, ընկերոջ, հարեւանի եւ ընտանիքի անդամի: Իսկ վստահությունը պետք է ձեռք բերել հաճախակի շփումներով, հոգատար ու սրտացավ վերաբերմունքով:

Ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանի հանձնարարականի համաձայն՝ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները պարբերաբար բակային հանդիպումներ են ունենում բնակիչների հետ: Հանձնարարականը՝ հանձնարարական, բայց ոստիկանները, ինչպես իրենք են խոստովանում, սիրով են կատարում այն:

Հանդիպումները կազմակերպվում են հանրապետության բոլոր մարզերում, բոլոր բնակավայրերում, գրեթե բոլոր բակերում: Մեր թաղարկումներում արդեն անդրադարձել ենք նման հանդիպումների, որ կազմակերպվել են մի շարք մարզերում: Ոստիկանները շատ բան ունեն ասելու բնակիչներին՝ ինչպես զերծ մնալ հանցավոր ոտնձգությունից, ինչպես պահպանել տունն ու ունեցվածքը, ինչ անել հանցագործություն լինելու դեպքում, ում դիմել կասկածելի բան նկատելիս: Մասնավորապես, խուրհուրդ է տրվում տնից երկարատեւ բացակայելու դեպքում տեղյակ պահել տարածքը սպասարկող համայնքային ոստիկանին, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան միջոցներ: Իսկ եթե գողություն է կատարվել՝ հարկավոր է անմիջապես դիմել ոստիկանություն, քանի որ արագ արձագանքման դեպքում մեծանում է բացահայտման հավանականությունը:

Ոստիկանները բնակիչներին տալիս են նաեւ այլ խորհուրդներ, նույնիսկ այնպիսիք, որոնք ուղղակիորեն չեն առնչվում ոստիկանական գործառույթներին, փորձում են ամեն կերպ օգտակար լինել: Բայց այս հանդիպումները միակողմանիորեն արդյունավետ չեն: Ոստիկանները փաստում են, որ իրենք էլ բնակիչներից շատ բան են իմանում:

Զրույց-հանդիպումների միջոցով իրավապահները ուսումնասիրում եւ վերլուծում են սպասարկվող տարածքի օպերատիվ իրավիճակը, իրավախախտումների տեսակը, դրանք ծնող պատճառներն ու պայմանները, դրանց հիման վրա կազմում են աշխատանքային պլաններ:

Հետաքրքիր միջավայր է բակը. պայմանականորեն փակ տարածք, որտեղ մարդիկ ուրախանում են միմյանց ուրախություններով, տխրում մեկի տխրությամբ, առաջինն են իրար հասնում օգնության, հարկ եղած դեպքում՝ պաշտպանում մեկմեկու: Այստեղ են ստեղծվում առաջին ընկերական հարաբերությունները, այստեղ են փորձարկվում համակեցության կանոնները, ի վերջո, բակը պետության մի յուրօրինակ մոդելն է, մանրակերտը՝ իր բնակիչներով, իր օրենքներով, իր կարգուկանոնով: Սրանք որքան էլ իրար նման՝ այնքան էլ տարբեր են: Բայց բոլոր բակերի բոլոր օրինապահ բնակիչների ցանկությունն է՝ լինել անվտանգ ու ապահով: Իսկ այդ նպատակին հասնելու համար հարկավոր են միասնական ջանքեր, այսինքն՝ ակտիվ համագործակցություն եւ հասարակություն-ոստիկանություն ամուր կապ:

Արա ՄՈՎՍԻՍՅԱՆ

Օպերատիվ

Վանաձորի ոստիկանների բացահայտումը

Օգոստոսի 9-ին Վանաձորում կողոպուտ էր կատարվել: Այդ մասին ոստիկանության Բազումի բաժնում տեղեկացան ժամը 15-ի սահմաններում՝ օպերատիվ կառավարման կենտրոնից: Անհայտ անձը Սուխումի փողոցի շենքերից մեկի մոտ հետեւել էր մի կնոջ, հետը շքամուտք մտել, երրորդ հարկում պոկել պարանոցի կախազարդով ոսկյա շղթան եւ դիմել փախուստի:

Բազումի բաժնի քրեական հետախույզները մեկնեցին դեպքի վայր, զրուցեցին բնակիչների հետ. կողոպուտն օրը ցերեկով էր եղել, գուցե որեւէ մեկը տեսել կամ ճանաչում էր փախչող երիտասարդին:

Համապատասխան միջոցառումների արդյունքում դեպքից օրեր անց իրավապահները տեղեկություններ ստացան, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Բամբակաշատ գյուղի անչափահաս մի բնակիչ: Օգոստոսի 13-ին կասկածվողը ներկայացվեց ոստիկանության Բազումի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն

Գրպանահատը բերման ենթարկվեց



Ոստիկանությունը հետեւողականորեն շարունակում է գրպանահատության դեմ պայքարը:

Օգոստոսի 12-ի երեկոյան ոստիկանության Արաբկիրի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ Լեփսուսի փողոցից Ազատության պողոտա ընկած ճանապարհահատվածում, միկրոավտոբուսի մեջ, ինչոր մեկը պայուսակից գողացել էր դրամապանակը, որի մեջ խաչով ոսկյա շղթա, փող, սոցիալական, բանկային ու զեղչի քարտեր էին:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցին: Որոնողական աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները: Համատեղ աշխատանքի շնորհիվ դեպքից մեկ օր անց գողությունը բացահայտվեց:

Օգոստոսի 13-ին քրեական հետախույզները Դրոյի փողոցից ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին նույն փողոցի 62-ամյա մի բնակչուհու, որը խոստովանեց կատարածը:

Գողոնը մասամբ հայտնաբերվել է:

Փաստի առթիվ քննություն է կատարվում:

Բռնություն ոստիկանի նկատմամբ

Օգոստոսի 13-ին ոստիկանության Բազումի բաժին էր զանգել նույն բաժնի համայնքային ոստիկանության տեսուչներից մեկն ու հայտնել, որ Վանաձորի Երեւանյան խճուղու շենքերից մեկն օպերատիվ խումբ ուղարկեն:

Երեւանյան խճուղի մեկնած ոստիկանները պարզեցին, որ նշված շենքի բնակիչներից մեկը, որն օրեր առաջ վեճի էր բռնվել հարեւանների հետ, սպառնացել նրանց, հարձակվել էր միջադեպի հանգամանքները պարզաբանելու եկած համայնքային ոստիկանի վրա, պատռել նրա վերնաշապիկը, պոկել տարբերանշանը, ձեռքերով ու ոտքերով խփել դեմքին ու կրծքավանդակին, եղունգկտրիչով վնասել բազուկը:

25-ամյա երիտասարդը բերման է ենթարկվել ոստիկանության Բազումի բաժին, ապա ներկայացվել Լոռու մարզի քննչական կոմիտե:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Երկուսը նույն աղբավայրում

Շիրակի մարզի Անուշավան գյուղի բնակիչ Վարդան Գեւորգյանը հիմնական աշխատանք չուներ: Ընտանիքի կարիքները հոգալու նպատակով ամեն օր գնում էր Արթիկի քաղաքային աղբանոց, որ մետաղ եւ այլ իրեր հավաքեր եւ վաճառեր:

Հունիսի 28-ին իր մեքենայով ուղեւորվում էր աղբավայր, երբ նկատեց ճանապարհին կանգնած կոմունալ տնտեսության աղբատար մեքենան: Ու մինչ մեքենայից կիջներ, բեռնատարի վարորդ Կարեն Սիմոնյանը եւ ուղեւոր Հայկ Պետրոսյանը, որը նույնպես աղբանոցից մետաղ էր հավաքում, մոտեցան նրան: Պահանջեցին, որ այլեւս աղբավայրից մետաղ չհավաքի: Վարդանը հակադարձեց, որ աղբավայրը նրանց սեփականությունը չի: Հայկը մեղադրեց Վարդանին՝ իբր իր կուտակած մետաղն է տանում:

Պարզվում է՝ Հայկը իր գտած ապակյա շշերը եւ մետաղի կտորները թողնում էր աղբանոցում՝ մինչեւ գնորդ ճարելը: Սակայն հաջորդ այցելության ժամանակ «հավաքածուն» թաքստոցում չէր գտնում: Պարզ էր, որ ինչ-որ մեկը պատրաստի ապրանքը իրենով էր անում: Հիմնական կասկածյալը Վարդանն էր: Վեճեցին: Կարենը բռունցքով խփեց Վարդանի դեմքին, իսկ Հայկը՝ նրա գլխին: Այսքանով նրանց հանդիպումն ավարտվեց:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում նրանք բացատրություններ տվեցին:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Երկուսը նույն ճանապարհին

Օգոստոսի 3-ին ոստիկանության Արթիկի բաժնում ահազանգ ստացվեց, որ արթիկցի Արման Հովսեփյանը ծեծված վիճակում տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Նյութերի նախապատրաստման ընթացքում իրավապահները պարզեցին կատարվածի մանրամասները:

Այդ օրը Արթիկի խաչմերուկներից մեկում հետիոտնի համար նախատեսված գծանշանների վրայով անցնելիս Արմանի կողքով սրընթաց անցավ հարեւան Սամվելը: Տարածությունը չնչին էր, ինչից Արմանը անչափ վախեցավ եւ ձեռքով խփեց մեքենային՝ ասելով.

- Կամաց քշիր, որ մարդկանց վրաերթի չենթարկես:

Սամվելը ոչինչ չասելով՝ հեռացավ, իսկ Արմանը զայրացած շարունակեց ճանապարհը: Քիչ անց նրան մոտեցավ Սամվելը եւ հարցրեց, թե ինչու խփեց իր մեքենային ու պատասխանի չսպասելով՝ բռունցքով խփեց Արմանի դեմքին: Վերջինս հավասարակշռությունը կորցնելով՝ ընկավ: Սամվելն էլ օգտվելով նրա անօգնական վիճակից՝ շարունակեց խփել: Ու միայն համաքաղաքացիների միջամտությամբ Սամվելը հանդարտվեց:

Սամվելը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 118 հոդվածի հատկանիշներով:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բուժիչ երաժշտություն

Ուսումնասիրելով մարդկության զարգացման պատմությունը՝ կարող ենք ասել, որ երաժշտական թերապիան, այս կամ այն ձեւով, գոյություն է ունեցել աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ, բոլոր մշակույթներում: Դրա վաղ ձեւերը մեծամասամբ կրել են կոլեկտիվ եւ սինկրետիկ բնույթ, երբ երաժշտությունը կիրառվել է պարի, բառային տեքստերի, ինչպես եւ բուսական ծագում եւ թմրեցուցիչ ազդեցություն ունեցող պատրաստուկների հետ միաժամանակ: Այս ամենը կիրառվել է տվյալ էթնոսի համար կարեւոր նշանակություն ունեցող առասպելական սյուժեները վերարտադրող մոգական ծիսակարգերի եւ արարողությունների շրջանակներում: Երաժշտության բարերար ազդեցության մասին գիտեին դեռեւս հին ժամանակներում: Պյութագորասը, Արիստոտելը, Պլատոնը, իրենց ժամանակակիցների ուշադրությունը սեւեռում էին երաժշտության բուժիչ հատկության վրա՝ համարելով, որ այն վերականգնում է տիեզերքի համամասնական կարգը, ինչպես եւ՝ մարդու մարմնի խախտված ներդաշնակությունը:

Հնչյունների բուժիչ ներգործության մասին առաջինը խոսեց Պյութագորասը՝ առաջարկելով «երաժշտական բժշկագիտություն» հասկացությունը: Գիտնականը օգտագործում էր որոշ մեղեդիներ՝ «հոգու պասիվությունը բուժելու համար, որպեսզի այն չկորցնի հույսը եւ չողբա»: Մեկ այլ մեղեդի էլ ծառայում էր «հոգին մոլորությունից հանելու, ինչպես եւ զայրույթի ու բարկության զգացումներից ազատելու» նպատակին: Այն կարծիքը, որ երաժշտությունն ընդունակ է հույզեր առաջացնել, նույնպես սկիզբ է առնում հույն փիլիսոփաներից: Որպես հետեւանք՝ Պլատոնին, նրա «կատարյալ» պետության համար, անհրաժեշտ եղավ խիստ գրաքննություն՝ ուղղված այդ պետության սահմաններում հնչող մեղեդիներին, ինչպես եւ պատկերներին, որպեսզի երկրի քաղաքացիները չգայթակղվեին թմրեցնող եւ զգայական մեղեդիներով, որոնք, իր կարծիքով, նպաստում էին հասարակության բարոյալքմանը:

Երաժշտության ներգործության առանձնահատկությունը կապված է մարդու օրգանիզմի եւ հոգեկանի զանազան համակարգերի ակտիվացման հետ, մասնավորապես՝ ֆիզիոլոգիական (զարկերակի հաճախականության, շնչառության ռիթմի, սրտանոթային համակարգի փոփոխություններ եւ այլն), շարժողական, հուզական, իմացական, սենսորային համակարգերը:

Երաժշտության միջոցով հնարավոր է շտկել մարդու խաթարված հոգեհուզական վիճակը՝ միաժամանակ նվազեցնելով կամ նույնիսկ վերացնելով այդպիսի խախտումների արդյունքում դրսեւորվող մարմնական հակազդումները: Ահա այստեղից էլ գալիս է երաժշտության՝ ցավի զգացումները թեթացնելու, մկանային ռելաքսացիա առաջացնելու, շարժողական ոլորտի վնասվածքների դեպքում մկանային տոնուսը վերականգնելու, հոգեհուզական լարվածությունը նվազեցնելու ունակությունը: Այս պարագայում երաժշտական թերապիան լայն կիրառում է ստացել ժամանակակից բժշկության տարբեր ոլորտներում:

Բերենք երաժշտության բուժիչ հատկությունն արտացոլող մի քանի օրինակ:

Հնում համարվում էր, որ երաժշտության միջոցով հնարավոր է դանդաղեցնել ծերացման գործընթացը եւ երկարացնել կյանքը: Արաբ բժիշկները համարում էին, որ երաժշտությունն անցնելով մարդու մարմնով՝ ընդունակ է բուժել նաեւ հոգին: Պատահական չէ, որ հին արաբները հիվանդանոցների շուրջ երաժիշտներ էին հավաքում:

Հին Եգիպտոսում երգչախմբի երգեցողությամբ ազատում էին անքնությունից, իսկ Հին Հունաստանում շեփորի հնչյունների օգնությամբ բուժում էին ջղարմատների բորբոքումը, նյարդային համակարգի խանգարումները: Այդ երկրում առաջին պահանջը, որ ներկայացվում էր բժիշկներին, ուսուցիչներին եւ դատավորներին՝ երաժշտության երկարամյա ուսումնասիրումն ու իմացությունն էր:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Եղայրներն ու նրանց կանայք

Ոստիկանություն է զանգել 67-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ վիճաբանության ժամանակ 63-ամյա եղբայրը ձեռքով խփել է իր դեմքին, ինչի հետեւանքով ինքն ընկել եւ ստացել է մարմնական վնասվածք:

Քիչ ուշ հաղորդում է տվել կրտսեր եղբոր կինը: Ըստ նրա՝ վիճաբանության ժամանակ, տեգոր կինը ձեռքով խփել է իր գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Ավանդույթները շարունակվում են:

Պատերազմ բանակի քեֆի ժամանակ

Գիշերը ոստիկանություն է զանգել 45-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ ութ հոգով իրեն եւ փեսային ծեծել են:

Պարզվել է՝ կեսգիշերին, բանակի քեֆից հետո, գյուղի սկզբնամասում քրոջ ամուսինը, նրա հորեղբոր որդիներն ու չորս ընկերները ձեռքերով եւ ոտքերով խփել են իրեն՝ պատճառելով վնասվածքներ:

Ձեռնարկվում են միջոցառումներ օղու տեսակը պարզելու ուղղությամբ:

Եղբայրաբար

Քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, բաժին են հրավիրել 53-ամյա մի տղամարդու: Նա հայտնել է, որ օրեր առաջ, օգտվելով 66-ամյա քրոջ անուշադրությունից, նրա դրամապանակից գողացել է 20 հազար ռուբլի:

Գողության մասին քույրը ոստիկանություն չի հայտնել: Քույր է:

Ողջ բառապաշարը՝ հինգ րոպեում

49-ամյա մի կին հաղորդում է տվել, որ տան բակում, վիճաբանության ժամանակ, 73-ամյա հարեւանուհին մոտ հինգ րոպե տեւողությամբ ամենատարբեր բնույթի հայհոյանքներ է տվել իր հասցեին:

Մինուս ընտանեկան բռնություն

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ վերջույթի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 37-ամյա մի տղամարդ:

Կեսգիշերն անց ինքնակամ բաժին է ներկայացել նրա 43-ամյա կինը եւ տվել խոստովանական բացատրություն, որ վիճաբանության ժամանակ խոհանոցային դանակով ինքն է խփել ամուսնու ուսին:

Օղի թորողները

72-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ իր առանձնատան մի մասը՝ ավտոտնակը, գոմն ու այգին, հինգ տարի առաջ առանց վարձակալության տվել է 73-ամյա մի ծանոթի, իսկ երբ վերադարձել է, նկատել է, որ նկուղից գողացել է օղի թորելու սարքը:

Տանտերը նախկինում ոստիկանություն չի դիմել՝ ցանկանալով ինքնուրույն լուծել հարցը:

Վնասի չափը պարզվում է:

Խնամակալի ինքնավարձատրությունը

Քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել 47-ամյա մի կնոջ: Պարզվել է, որ նա որպես խնամակալ գտնվելով 82-ամյա մի տղամարդու բնակարանում եւ օգտվելով նրա ու կնոջ անուշադրությունից՝ վերցրել է նրանց բանկային քարտերը եւ յուրաքանչյուր քարտից կանխիկացրել 40 հազար դրամ:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ օգոստոսի 15-ից 22-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 19 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ երեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման, ազատությունից ապօրինի զրկելու եւ անառակաբարո գործողությունների, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ գողության, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ շորթման, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ խուլիգանության եւ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 3 հետախուզվող:

Արձանագրվել է 111 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 139-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 27 դեպք. 1 մարդ զոհվել է, 27-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Օգոստոսի 19-ին Երեւանի Ռուբինյանց փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «ԳԱԶել» մակնիշի ավտոմեքենայի. «Օպել»-ի 31-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 19-ին Երեւան-Սեւան ճանապարհի 29-րդ կմ-ին «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը. 23-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Գառնիի ձոր տանող ճանապարհին «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենան գլորվել է ձորը, ապա հրդեհ է բռնկվել մեքենայի սրահում. 35-ամյա վարորդը եւ 31-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ մյուս ուղեւորուհին այրվել է:

■

Օգոստոսի 20-ին Երեւանի Մաշտոցի պողոտայում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 37-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւանի Հալաբյան եւ Մարգարյան փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 52-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւանի Արցախի եւ Ռոստովյան փողոցների խաչմերուկում անհայտ ավտոբուսի վարորդը վրաերթի է ենթարկել 64-ամյա հեծանվորդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւանի Կոմիտասի պողոտայում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 58-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւանի Ռուբինյանց փողոցում իրար են բախվել «Միցուբիշի» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 34-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւան-Երասխ ճանապարհի 40-րդ կմ-ին «Ֆոլքսվագեն Քեդի» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի. «Ֆորդ Տրանզիտ»-ի 31-ամյա ուղեւորը եւ «Ֆոլքսվագեն Քեդի»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Արարատ-ՈԿՖ ճանապարհին «Մերսեդես Բենց-200 Ե» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ ընկել ջրատարը. 38-ամյա վարորդը եւ 39-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Մասիս-Երեւան ճանապարհի 3-րդ կմ-ին «Նիսան Մարչ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել դաշտում. 32-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 176-րդ կմ-ին «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 42-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 20-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 109,8-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-21099» եւ «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Վեկտրա»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Օրենք եւ զարմանք

Դժվար թե գտնվի մեկը, որ փորձի կասկածի տակ առնել օրենքների անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր օրենք կարգավորում է որոշակի հարաբերություններ: Սակայն երբեմն տարբեր երկրներում հանդիպում են այնպիսի նորմատիվ ակտեր, որոնք պարզապես զարմանք են հարուցում:

❍ Երբեւէ մտածե՞լ եք, որ Մեծ Բրիտանիայում կա մի վայր, որտեղ թագուհին չի կարող մուտք գործել: Զարմացա՞ք: Այո՛, դա Համայնքների պալատն է. միակ հաստատությունը, ուր թագուհին չի կարող մուտք գործել, քանի որ պալատի անդամ չի:

❍ Անգլիայի թագուհու հետ կապված եւս մի հետաքրքիր փաստ. թագուհին միակն է երկրում, որի մեքենայի համարանիշի առկայությունը պարտադիր չէ:

❍ Տարօրինակ ազգ են անգլիացիները. իրենց քաղաքապետին դիմում են միայն «միսթր մէր», եթե անգամ քաղաքապետը կին է:

❍ Անգլիայում շանը վրաերթի ենթարկելու համար պատասխանատվությունը շատ ավելի խիստ է:

❍ Ռիո դե Ժանեյրոյում ժամը 22-ից մինչեւ առավոտվա ժամը 5-ը վարորդները կարող են չենթարկվել լուսակրի կարմիր ազդանշանին: Այս միջոցի միակ նպատակը վարորդներին գիշերային ժամերին զինված հարձակումներից ապահովագրելն է: Այո՛, գիշերվա ժամերին վարորդները ենթարկվում են հարձակման: Հարյուրավոր դեպքեր են գրանցվել, երբ հարձակման ենթարկված վարորդը դիմադրել է եւ արդյունքում՝ սպանվել:

❍ Շվեդիայի եւ Նորվեգիայի բնակիչները խուսափում են մեծ շներ պահելուց, քանի որ Շվեդիայում շան տերերը հարկ են վճարում կենդանու հասակին համապատասխան, իսկ Նորվեգիայում՝ ըստ երկրության:

❍ Շատ երկրներում գազարը բանջարեղեն է համարվում, իսկ այ՛, Եվրոպայի տնտեսական միության 1991 թվականի հունվարի 1-ի որոշմամբ՝ գազարը միրգ է, ինչը հնարավորություն է տալիս օրինականացնել գազարի մուրաբա ապրանքատեսակը:

❍ Մեր երեխաների ամենասիրելի զբաղմունքներից մեկը կավճով ասֆալտին նկարելն է, մինչդեռ իտալական օրենքները ասֆալտին նկարելը նույնացնում են աղքատության հետ:

❍ Բիրմայում կարող ես հայտնվել ճաղերից այն կողմ, եթե համակարգիչդ չես գրանցել: Չգրանցված համակարգիչը իսկական գլխացավանք է տիրոջ համար այդ երկրում:

❍ Տարօրինակ է, բայց ժամանակին համահունչ բարեփոխումներ են կատարվել, այսպես կոչված՝ «Կոզա Նոստրա»-ում: Այստեղ ամրագրված է հինգ հիմնական սկզբունք՝ բացարձակ լռություն պահպանել, մշտապես ունենալ լավ դատապաշտպան, երբեք բռնություն չկիրառել պետական ծառայողների նկատմամբ, մաֆիոզներից բացի ոչ ոքի չվստահել եւ չխուսափել հարկեր վճարելուց:

❍ Կար ժամանակ, որ աերոպլանով թռչելը հավասարազոր էր ինքնասպանության: Անցած դարասկզբին ԱՄՆ կոնգրեսում մի օրինագիծ էր շրջանառության մեջ դրվել, որ աերոպլանով թռչելու համար նախատեսվում էր հինգ տարվա ազատազրկում, քանի որ դա հավասարազոր էր ինքնասպանության փորձի:

❍ Ամուսնությունները, որպես մարդկային կարեւորագույն հարաբերություններ, նույնպես կարգավորվում են տարբեր իրավական ակտերով, սակայն դրանք կողմերի պարտավորություններն ու իրավունքներն են սահմանում եւ հաճախ հին ու նոր օրենքներն իրենց բնույթով պարզապես զավեշտ են: Այս հարցում թերեւս առաջատարը ԱՄՆ-ն է, որի տարբեր նահանգներում գործում են բավական արտառոց օրենքներ: Օրինակ՝ Միչիգան նահանգում կնոջը թույլատրվում է համապատասխան սանրվածք ընտրել միայն ամուսնու թույլտվությամբ: Իհարկե, ներկայումս օրենքի այս պահանջը գրեթե չի կիրառվում, սակայն կնոջ սանրվածքից դժգոհ ցանկացած ամուսին իրավասու է օգտվել իր իրավունքից: Իսկ Մոնտանայում կինն իրավունք չունի բացել ամուսնուն հասցեագրված նամակը, հակառակ դեպքում՝ կազատազրկվի: Արիզոնայում ամուսնացած կանայք մեծ առավելություն ունեն. եթե մինչ ամուսնանալը նրանց արգելվում էր նույնիսկ ձկնորսության գնալ, ապա ամուսնացած կանայք կարող են հանգիստ, առանց ուղեկցի, ձկնորսության գնալ, սակայն՝ կիրակի օրերին: Ֆլորիդայում միայն ամուսնացած կանայք կարող են թռչել պարաշյուտով ու կրկին՝ կիրակի օրերին:

Անիծվածների կոկին

Ցմահ դատապարտվածների համար նախատեսված ռուսաստանյան N 5 ուղղիչ գաղութը (ՈՒԳ-N 5) կամ «Վոլոգոդյան գարշապարը» գտնվում է Վոլոգոդյան մարզի Նովոգո լճի (Նովոզերո) Օգնեսի կղզում: Դեռեւս 20-րդ դարի սկզբին կղզում էր գտնվում Կիրիլո-Նովոզորսկյան վանքը, որը հիմնվել էր 1517 թ.:

Վանքը հայտնի էր նրանով, որ հովանավորը եղել է ռուսական ցար Իվան Սահեղը: Իրավիճակը փոխվեց 1928 թ., երբ խորհրդային իշխանությունը փակեց վանքը, իսկ վանականներին քշեց՝ նույնիսկ խլելով նրանց հագուստը: Նոր իշխանավորները բռնագրավեցին վանքի ողջ ունեցվածքը, վառեցին սրբապատկերները: Կղզին վերածվեց գաղութի, որտեղ բանտարկեցին, այսպես կոչված՝ ժողովրդի թշնամիներին: Դրանից հետո Օգնեսի կղզին անվանեցին «Բելոզերի Սոլովկի»՝ Սպիտակ ծովի կղզիների խոշորագույն ուղղիչ ճամբար «Սոլովկի»-ի նմանությամբ:

ՈՒԳ- N 5-ի տարեգրությունը

Ստալինյան ժամանակ Օգնենիում գտնվում էր միայն ԳՈՒԼԱԳ-ի գոտիներից (զոնա) մեկը, իսկ 1938 թ. սկզբին կղզում կազմակերպվեց N 14 ուղղիչ-աշխատանքային գաղութը (N 14 ՈՒԱԳ), որը 1945 թ. վերակազմակերպեցին N 6 ՈՒԱԳ-ի: Կղզի էին արտաքսում հիմնականում նրանց, ում կասկածում էին գերմանացիների հետ ունեցած կապի համար, այդ թվում՝ գերմանական գերության մեջ հայտնված խորհրդային զինվորների: Իսկ 1956 թ. սկսած՝ կրկին վերածվեց ավազակների, մարդասպանների գաղութի:

1962 թ. Օգնենի կղզում կազմակերպվում է N 5 ուղղիչ-աշխատանքային գաղութը, որին ոչ պաշտոնապես անվանում են «Վոլոգոդյան գարշապար»: Մինչեւ 1970-ական թթ. այնտեղ գրեթե չկային «օրենքով գողեր», ուստի գաղութը համարվում էր ԽՍՀՄ ամենակարգապահ գաղութներից մեկը: Սակայն Նովոզերում աստիճանաբար հայտնվեցին քրեական հեղինակություններ:

2014 թ. Նովոզերում կենտրոնացրին ցմահ դատապարտվածներին: Մինչ այդ ՈՒԳ-N 5-ը կապիտալ նորոգեցին, կառուցեցին ճաշարան՝ բանտի աշխատակիցների համար, նորոգեցին հարեւան Սլադկի կղզի տանող կամուրջը: Գաղութ տեղափոխվեց ցմահ դատապարտվածների առաջին խումբը՝ 17 հոգի: Աստիճանաբար «Վոլոգոդյան գարշապարը» դարձավ սերիական մարդասպանների, մարդակերների, մանկապիղծների կալանավայր:

«Վոլոգոդյան գարշպարի» գազանները

ՈՒԳ-N 5-ի առավել նշանավոր կալանավորներից մեկը Պերմի բնակիչ Ալեքսանդր Բիչկովն է՝ մարդասպան եւ մարդակեր, Խիշչնիկ մականունով: Բիչկովը սպանել էր 9 հոգու, հիմնականում՝ անտունների եւ ալկոհոլիկների: Վերջիններիս նկատմամբ նա առանձնահատուկ ատելություն ուներ. Բիչկովի մայրը հարբեցող էր եւ ագրեսիվ էր վերաբերվում որդու հետ: Իր առաջին սպանությունը Բիչկովը կատարել էր 2009 թ.: Վաթսունամյա թոշակառուին հրավիրել էր իր տուն, հետո զոհի մարմինը մասնատել ու թաղել էր տան հետեւում:

Մյուս զոհերի հետ Բիչկովը հաշվեհարդար էր տեսնում նման կերպ: Նրանց խաբեությամբ տանում էր անմարդաբնակ վայր, հարբեցնում, ապա սպանում էր դանակով կամ մուրճով, հետո կտրում եւ ուտում էր նրանց սիրտը եւ լյարդը: Հանցագործին բռնեցին այն ժամանակ, երբ կողոպտում էր խանութ: Խուզարկության ժամանակ գտան օրագիրը, ուր նկարագրում էր իր հանցագործությունները:

Խիշչնիկի հարեւանն է պերմյան մոլագար Բորիս Կոշչեեւը: 2013 թ. հունիսի 13-ից մինչեւ հուլիսի 10-ը սպանել էր հինգ համաքաղաքացիների: Կոշչեեւի առաջին զոհը դարձավ նրա բաժակակիցը, որի տնից մոլագարը գողացավ թանկարժեք իրեր: Այդ դեպքից հետո Կոշչեեւը բռնաբարեց, ապա սպանեց չորս կնոջ, սակայն հինգերորդը ողջ մնաց եւ մանրամասն նկարագրեց մոլագարին, ինչը հնարավորություն տվեց նրան ձերբակալել:

Հանցակից սերիական մարդասպաններ Արտեմ Անուֆրիեւն ու Նիկիտա Լիտկինը 2010 թ. դեկտեմբերից մինչեւ 2011 թ. ապրիլը սպանել էին վեց հոգու, որոնց թվում՝ 12-ամյա դեռահասի: Տղային սպանեցին առանց որեւէ պատճառի: Հարձակվել էին հղի կնոջ եւ նրա վեցամյա ազգականուհու վրա: Աղջնակին հաջողվել էր փախչել: Մարդասպանները կոտրել էին կնոջ մատները եւ վնասել գլուխը, սակայն իրենցից անկախ պատճառներով չէին կարողացել «գործը» մինչեւ վերջ հասցնել:

Մոլագարների հաջորդ զոհը Իրկուտսկի բնակիչ էր, որը ուշ երեկոյան վերադառնում էր տուն: Մարդասպանները նրան գլխատեցին: Դատարանում Անուֆրիեւը ամեն կերպ փորձում էր չքմեղանալ եւ մեղադրել Լիտկինին, սակայն նա գլխավոր մեղավոր ճանաչվեց ու դատապարտվեց ցմահ բանտարկության:

Շարունակելի

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Ինչպե՞ս չդառնալ հանցագործ

Օգոստոսի 13-ին հիվանդանոցից ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում էր ստացվել, որ «շտապօգնության» խումբը կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխել 15-ամյա պատանու:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ Եղիշե Թադեւոսյան փողոցի սուպերմարկետի հետնամասում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ պատանուն դանակահարել էր 15-ամյա մեկ այլ պատանի, որը ներկայացվել է բաժին: Նա խոստովանել է, որ ինքն է դանակահարել հիվանդանոց տեղափոխված պատանուն:

Կատարվում է նախաքննություն:

Հանցագործություն կատարած անչափահասների ծնողները հաճախ պարզապես երկերեսանիություն են անում՝ իբր անզոր են եղել զսպել զավակի հանցավոր նկրտումները կամ վերահսկել նրա գործողությունները, իբր դպրոցը «մատը մատին չի խփել» նրա դաստիարակության հարցում, իբր վատ շրջապատ է ընկել: Հազարումի «արդարացում» են մեջտեղ բերում՝ իրենց աչքի գերանը չտեսնելու համար: Իրականում՝ զավակի հանցավոր արարքների թիվ մեկ մեղավորն իրենք են, որ պարզապես նյարդեր են խնայել եւ իրենց հանցավոր անտարբերությամբ զավակի ճակատագրի խեղման անուղղակի մասնակիցը դարձել: Մեղավո՛ր դարձել: Որովհետեւ գլխավորապես ծնողի անտարբերության պատճառով են խեղվում անչափահասների ճակատագրերը, նրանց հանցագործ դառնալու հարցում ամենամեծ դերակատարությունը, այնուամենայնիվ, ծնողինն է: Անտարբերությունն ընդհանրապես չարիք է, իսկ ծնողի անտարբերությունը՝ կրկնակի չարիք: Ծնողի, որը զլանում է ամենակարեւոր պարտականության՝ զավակի դաստիարակության հարցում:

Ահավասիկ, ծնողների անտարբերության պատճառով 16-ամյա Արսենը լիովին տրվեց գողությանը: Մոտ երկու տասնյակ բնակարան ու խանութ «ասպատակեց»: Չբռնվեց ու ավելի գոտեպնդվեց: Ավելի վաղ նրա «գործերն» ի հայտ չեկան, որովհետեւ հինգ-վեց դեպքերում, օրինակ, տուժողները լռություն պահպանեցին: Այդ առաջինների շուտ բացահայտվելու դեպքում, թերեւս, պատանու հանցավոր ճամփան կարճվեր:

Այս «ճարպիկ» տղայի «գործունեության» հիմնական դաշտը իրենց թաղն էր՝ Նոր Նորքի յոթերորդ զանգվածը: Առաջին թիրախը դիմացի հարեւանն էր: Նրանց բնակարանից ոսկյա մատանի ու երեսուն հազար դրամ գողացավ, երբ հարեւանուհին բնակարանի դուռը բաց թողել՝ իրենց տանը սուրճ էր խմում: Հարեւան շքամուտքի հարեւանի բնակարանից էլ երկու բջջային հեռախոս ու մագնիտաֆոն գողացավ:

Երկու հարեւաններն էլ ոստիկանություն չդիմեցին: Ոստիկանություն չդիմեց նաեւ կրպակատերը, որի կրպակից Արսենը երեսուն հազար դրամի սննդամթերք գողացավ:

Հետագայում «գործողությունների» տարածքն ու ծավալն ընդլայնեց, նաեւ իրենից տասը տարով մեծ գործընկեր ունեցավ: Թաղեցի Անդրանիկ Թորոսյանն էր՝ նախկինում գողության համար երկու անգամ դատապարտված:

Չանդրադառնալով հանցավորության գիրկը նետված պատանու մյուս գործերին՝ նշենք մի կարեւոր հանգամանք. պատանին ոստիկանությունում պրոֆիլակտիկ հաշվառման մեջ էր: Այսինքն՝ ծնողները տեղյակ էին որդու նախասիրություններին եւ առավել ուշադիր, պատասխանատու լինելու խնդիր ունեին: Մինչդեռ հանցավոր անտարբերությամբ աչք էին փակել նրա գիշերային անհետացումների, աննպատակ թափառումների, դասերից բացակայելու, ուսման առաջադիմության վրա:

Ծնողների անտարբերությունից տուժած մյուս անչափահասը Աբովյան քաղաքից է: Նրա հաշվին գրանցված գողությունները հինգն են:

Արտակը նույնպես տասնհինգ տարեկան է, չի սիրում գիր ու գրականություն, փոխարենը՝ սիրում է աննպատակ թափառել: Դասերից ավելի շատ բացակայում է, քան հաճախում: Չնայած դասարանի լավ սովորողների համար տոն է նրա դասի չգնալը. միակ բանը, որ անում է Արտակը դպրոցում, դասը խանգարելն է:

«Ճակատագրական» գողությունը, որ «հանդիպեցրեց» ոստիկանների հետ, փետրվարի 4-ին էր: Դալարի փողոցի տներից մեկը հաջողությամբ մուտք գործեց, ոսկյա շղթա, մատանի ու տասնհինգ հազար դրամ գողացավ, բայց ժամեր անց ստիպված էր գողոնը ներկայացնել ոստիկաններին ու մանրամասնել ոչ միայն այդ, այլեւ գողության մյուս չորս դեպքերը...

Կա՞ր ելք կանխելու այս պատանիների գող չդառնալը: Անշուշտ, եթե ծնողներն «ուղտի ականջում չքնեին», եթե իրենց զավակներին պատշաճ ուշադրություն դարձնեին: Այլապես որքան էլ ոստիկանությունն ու շահագրգիռ մյուս գերատեսչությունները միջոցառումներ կազմակերպեն, ծրագրեր մշակեն ու կիրառեն, եթե ծնողը ամենայն պատասխանատվությամբ չգիտակցի իր առաջնահերթ պարտականությունը, եթե չհամագործակցի դպրոցի ու ոստիկանության անչափահասների գործերով ծառայության հետ՝ իր զավակին հանցավոր հետաքրքրություններից ձերբազատելու գործում արդյունքը զրոյական կլինի:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բերման ենթարկվածը նաեւ հետախուզվում էր

Օգոստոսի 10-ին Նոյեմբերյանում գրանցված մի ընկերության հաշվապահ ոստիկանությունում հաղորդում էր տվել, որ նույն օրը աշխատասենյակից գողացել են իր դրամապանակը, որի մեջ եղել է 235 դոլար, 50 հազար դրամ, տարբեր երկրների մետաղադրամներ, փաստաթղթեր ու քարտեր:

Հաղորդումից մեկ օր անց ոստիկանության Նոյեմբերյանի եւ Իջեւանի բաժինների ծառայողների համատեղ միջոցառումներով հանցագործությունը բացահայտվեց: Գողությունը կատարելու կասկածանքով Իջեւանի հյուրանոցներից մեկում հայտնաբերվեց ու ոստիկանություն բերման ենթարկվեց 58-ամյա մի տղամարդ: Նա խոստովանեց կատարածը:

Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց փողը: Ըստ կասկածյալի հայտարարության՝ հայտնաբերված 100 դոլարը, մոտ 50 հազար դրամը գողացել էր Նոյեմբերյանի հյուրանոցներից մեկից:

Ոստիկանները հետագա միջոցառումներով պարզեցին, որ բերման ենթարկվածը ոստիկանության Աշտարակի բաժնի կողմից 2018 թվականից հետախուզվում է քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի՝ գողության մեղադրանքով:

Կատարվում է նախաքննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Թմրանյութ համացանցով

Ոստիկանությունը շարունակում է թմրանյութերի օգտագործման եւ անօրինական թմրաշրջանառության դեմ հետեւողական պայքարը:

Օգոստոսի 11-ին հերթական դեպքը ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները բացահայտեցին:

Քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Բայրոնի փողոցից, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին 20-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց սպիտակ բյուրեղանման զանգվածով պոլիէթիլենային փաթեթ: Ըստ երիտասարդի՝ հայտնաբերվածը կրիստալ թմրանյութ է, որը ձեռք էր բերել համացանցի միջոցով:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ թմրանյութն իրացնող անձին հայտնաբերելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գողություն հյուրանոցում

Օգոստոսի 8-ի առավոտյան օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում ստացվեց, որ երկու օր առաջ Տիչինայի փողոցի հյուրանոցում հափշտակել են մի կնոջ ոսկյա շղթան:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ քրեական հետախույզները պարզել են, որ Սիլիկյան թաղամասի 35-ամյա մի տղամարդ, օգոստոսի 5-ին տուժողի հետ գտնվելով հյուրանոցային համալիրի սենյակներից մեկում եւ օգտվելով հանգամանքից, որ նա լոգարանում է, սեղանի վրայից գողացել էր ոսկյա շղթան:

Իրավապահների բացատրական աշխատանքի շնորհիվ կասկածվողը ներկայացել է ոստիկանության Մալաթիայի բաժին:

Ըստ նախնական տվյալների՝ նա գողոնը մայրաքաղաքի գրավատներից մեկում գրավ էր դրել:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

www.police.am

Խոստովանեց հանցարարքը

Օգոստոսի 14-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները, ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Հալաբյան փողոցից բերման են ենթարկել 26-ամյա մի երիտասարդի:

Պարզվել է, որ նա հուլիս-օգոստոս ամիսներին Սիլիկյան թաղամասի մի խանութից գողություններ է արել:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզել են, որ նա Աջափնյակում եւս կատարել է մի շարք գողություններ:

Նախապատրաստվում են նյութեր:

Մեքենայում ատրճանակ հայտնաբերվեց

Օգոստոսի 15-ին ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս, ԿՀԴՊ գլխավոր վարչության, Կոտայքի մարզային վարչության ու ենթակա բաժինների ծառայողները, համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումներով, 38-ամյա մի քաղաքացու մեքենայում խուզարկություն կատարեցին:

Հայտնաբերվեց գործարանային արտադրության «Մակարով» ատրճանակ՝ լիցքավորված ութ փամփուշտով:

Մեքենայատիրոջ հայտնածով՝ ատրճանակը պատկանում էր հանգուցյալ եղբորը:

Ատրճանակն ուղարկվել է փորձաքննության:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Օգոստոսի 15-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները, գրպանահատության կասկածանքով, Կասյան փողոցից ոստիկանություն բերման ենթարկեցին 31-ամյա մի տղամարդու:

Նրա մոտից հայտնաբերվեց փող, որը, ըստ բերման ենթարկվածի, նույն օրը գողացել էր թիվ 58 երթուղային ավտոբուսում՝ մի քաղաքացու գրպանից:

Ձեռնարկվում են միջոցառումներ տուժողին հայտնաբերելու ուղղությամբ:

«Հեղինակությունը» բերման ենթարկվեց

Օգոստոսի 15-ին ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության, Կենտրոնական բաժնի եւ ճանապարհային ոստիկանության ծառայողների համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանություն բերման ենթարկվեց քրեական աշխարհում, այսպես ասած, հեղինակություն վայելող, Երեւանի 49-ամյա մի բնակիչ:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց 2 մլ սպիտակ հեղուկով ներարկիչ, 2 գրամ ափիոն թմրամիջոցի նմանվող զանգված եւ մոխրացված հեպքերով կաթուցիչ:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Անվտանգ շրջադարձ

Շրջադարձ կատարելը պատասխանատու եւ վտանգավոր մանեւր է: Այս գործողության ժամանակ գլխավորն անվտանգ պահի եւ տեղի ընտրությունն է, վարորդի զգոնությունը:

Ներկայացնենք մասնագետների մի քանի խորհուրդ:

Ճանապարհի ցանկացած թեքվածություն հաղթահարելիս մեքենայի վրա սկսում է ազդել կողային ուժը, որը փորձում է մեքենայի ընթացքը շեղել շրջադարձի հակառակ ուղղությամբ: Այդ ուժի մեծությունը պայմանավորվում է բարձր արագությամբ եւ շրջադարձի փոքր շառավղով:

Այնպես որ, անվտանգ շրջադարձ կատարելու հիմնական պայմանը ճիշտ արագության ընտրությունն է: Եթե մեքենան մեծ չափեր ունի կամ բեռ է տեղափոխում, կամ էլ ոլորանը կտրուկ է, ապա արագությունը հարկավոր է նվազեցնել մինչեւ ճանապարհի այդ հատվածին հասնելը:

Շրջադարձի ժամանակ կողային ուժի ազդեցությունը կարելի է նվազեցնել՝ արհեստականորեն մեծացնելով շրջադարձի շառավիղը, օգտագործելով երթեւեկության գոտու լայնությունը, սակայն ոչ մի դեպքում պետք չէ զբաղեցնել հանդիպակաց գոտին. ոլորաններին տեսադաշտը խիստ սահմանափակ է, եւ հնարավոր է նախապես չնկատել հանդիպակաց երթեւեկող մեքենան:

Արագության կտրուկ նվազեցումը, ավելի ցածր աստիճանների անցնելը հարկավոր է իրականացնել նախապես, մինչեւ կառավարվող անիվների թեքվելը, իսկ շրջադարձ կատարելիս ղեկն անհրաժեշտ է պահել երկու ձեռքով:

Քաղաքային պայմաններում շրջադարձ կատարելիս վարորդը պետք է զիջի ճանապարհը հետիոտնին, որը հատում է երթեւեկելի այն հատվածը, ուր թեքվելու է մեքենան: Բացի այդ, ձախ շրջադարձ կամ շրջապտույտ կատարելիս վարորդը պետք է զիջի ճանապարհը ուղիղ եւ աջ երթեւեկող հանդիպակաց տրանսպորտային միջոցին: Վարորդը նաեւ պետք է հետեւի անվադողի եւ մայթեզրի միջեւ ընկած համապատասխան միջտարածություն նախատեսի:

Շրջադարձ կատարելիս պետք է համոզվել, որ ձախից վազանց չեն կատարում, եւ, առհասարակ, մինչեւ կոնկրետ մանեւրը հարկավոր է տեսադաշտում պահել ճանապարհի ամբողջ հատվածը. փորձառու վարորդները ապահովության համար չեն վստահում հայելիներին, այլ թեքվում եւ սեփական աչքերով են համոզվում, որ վտանգ չկա:

Ներկայացնենք վերջին օրերին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների մի քանի դեպք, երբ վթարը տեղի է ունեցել շրջադարձի ժամանակ:

Հուլիսի 23-ին «Մերսեդես» մակնիշի մեքենան Երեւանի Մաշտոցի պողոտայի եւ Մոսկովյան փողոցի խաչմերուկում շրջադարձ կատարելիս բախվել է «ԲՄՎ» եւ «Օպել» մակնիշի մեքենաների. վարորդները եւ «Օպել»-ի ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Նույն օրը Արարատի մարզի Հովտաշեն գյուղում «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենան շրջադարձ կատարելիս դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ ընկել գետը: 36-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Շրջադարձ կատարելիս որոշ հանգամանքներ հաշվի չառած մեկ այլ վարորդ էլ հուլիսի 24-ին Կոտայքի մարզի Պառոշյան գյուղում իր վարած «ՎԱԶ-2109» մակնիշի մեքենայով նախ բախվել է կայանված «Մերսեդես»-ի, ապա վրաերթի ենթարկել ճամփեզրին կանգնած 15-ամյա պատանուն: «ՎԱԶ-2109»-ի վարորդը եւ պատանին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Օգոստոսի 3-ին Երեւանի Մելքումովի փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենան շրջադարձ կատարելիս բախվել է կայանված «Օպել»-ին, իսկ Տավուշի մարզի Գոշ գյուղում «ՊԱԶ-672» մակնիշի մեքենան բախվել է էլեկտրասյանը եւ դարձյալ՝ շրջադարձ կատարելիս:

Վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Օգոստոսի 12-ին Երեւանի Հալաբյան եւ Արզումանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Տոյոտա» մակնիշի մեքենաներ. բախումը «Օպել»-ի վարորդի վտանգավոր շրջադարձ կատարելու հետեւանքով էր: Վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Օրինակներ կարելի է շատ բերել, խնդիրն է էական՝ շրջադարձ կատարելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշ հանգամանքների, առաջին հերթին՝ ընտրել անվտանգ պահ ու վայր:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապօրինի ծառահատումներ

Օգոստոսի 13-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Տավուշի եւ Լոռու մարզային վարչությունների ու ենթակա ստորաբաժանումների ծառայողներից կազմված ոստիկանական խմբեր Տավուշի մարզի տարբեր համայնքների փայտամշակման արտադրամասերում ստուգայցեր են կատարել:

Իջեւանի Երեւանյան, Մետաղագործների, Բլբուլյան փողոցներում գործող փայտամշակման արտադրամասերում կատարված զննությամբ հայտնաբերել են 39 խմ փայտանյութ, 10 խմ փայտի սղոցման թափոն, փայտածուխ պատրաստելու սարքեր՝ լցված վառելափայտով եւ փայտե դետալներով պարկեր: Ձեռնարկատերերը հայտնաբերվածի վերաբերյալ որեւէ փաստաթուղթ չեն ներկայացրել:

Ժամեր անց ոստիկանները Դիլիջանի Գետափնյա փողոցի փայտամշակման արտադրամասում 70 քառակուսի մետր հաճարենու մանրատախտակ են հայտնաբերել, որի վերաբերյալ արտադրամասի տերը փաստաթուղթ չի ունեցել:

Զննության են ենթարկվել Տավուշի մարզի մի շարք գյուղերում գործող փայտամշակման արտադրամասեր. մոտ 140 խմ փայտանյութ եւ 117 պարկ փայտածուխ է հայտնաբերվել: Ձեռնարկատերերը դարձյալ փաստաթուղթ չեն ներկայացրել:

Զննությամբ մոտ 12 կաղնու եւ հաճարենու տախտակներ են հայտնաբերվել Նոյեմբերյանի փայտամշակման արտադրամասերից մեկում, որոնց վերաբերյալ արտադրամասի տերը փաստաթուղթ չի ներկայացրել:

Բոլոր փաստերով նախապատրաստվում են նյութեր:

Անտառային գոտիներում պարբերաբար կատարվող շրջայցերից զատ, ոստիկանները հետամուտ են նաեւ քաղաքացիների արձագանքներին: Անպատասխան չի մնում որեւէ դիմում-բողոք, լրատվական կայքի որեւէ հրապարակում:

Օգոստոսի 12-ին «hetq.am» լրատվական կայքում հրապարակված հոդվածի հիման վրա ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Դիլիջանի Կալինինի փողոցի մի բնակիչ հուլիսին Դիլիջանի անտառից ձեռք բերած վառելափայտը օգոստոսի 12-ին իր «ՈՒԱԶ» մակնիշի մեքենայով տեղափոխել է Գավառ եւ վաճառել:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«Արհեստի» ուժը

Հունիսի 1-ին Լուսառատ գյուղի մի բնակչուհի ոստիկանության Արտաշատի բաժնում հաղորդում էր տվել, որ Արտաշատի Աթարբեկյան փողոցի վերջամասում ինչ-որ մեկը խփել է դեմքին ու գլխին, հափշտակել պայուսակն ու փախել:

Ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ կողոպուտը բացահայտվեց: Պարզվեց, որ այն կատարել էր նախկինում մի քանի անգամ դատապարտված Արտաշատի մի բնակիչ:

Ոստիկանների բացատրական աշխատանքի արդյունքում նա ներկայացավ ոստիկանություն եւ խոստովանեց կատարածը:

Կողոպուտի փաստով կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Բացահայտվեց հինգ ամիս անց

Մարտի 16-ին «Միքայելյան» բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ հիվանդանոցում գողություն է կատարվել:

Մեկնել էր ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի օպերատիվ խումբը:

Հիվանդանոցի բուժքույրը հաղորդում էր տվել, որ ահազանգից կես ժամ առաջ իր աշխատասենյակի պատուհանից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է անձնագիր, փող եւ զեղչի քարտեր:

Քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, օգոստոսի 15-ին, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին Ուզբեկստանի քաղաքացի, 39-ամյա մի տղամարդու, որը տվեց խոստովանական բացատրություն:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության Նոր Նորքի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ օգոստոսի 15-ին Արարատ քաղաքի Աբովյան փողոցից բերման է ենթարկվել 39-ամյա Լուսինե Պ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 (խարդախությունը) եւ 325 (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) հոդվածների մեղադրանքներով:

◆

ԱԱԾ սահմանապահ զորքերի, ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի եւ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ օգոստոսի 14-ին Բագրատաշենի սահմանային անցակետից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Թաքուր Ս.-ն, որը հետախուզվում էր Հնդկաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից մի շարք ծանր հանցագործություններ կատարելու մեղադրանքով, այդ թվում՝ ահաբեկչության եւ սպանության համար:

◆

«Կանեփ-կակաչ-2019» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում օգոստոսի 13-ին Երեւանի Այգեստան 9-րդ փողոցից բերման է ենթարկվել Հնդկաստանի Հանրապետության Փենջամբի նահանգի իրավապահ մարմինների կողմից քրեական օրենսգրքի յոթ հոդվածների մեղադրանքներով հետախուզման մեջ գտնող Հնդկաստանի Հանրապետության 33-ամյա քաղաքացի:

◆

Օգոստոսի 15-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Դոհա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո գծային բաժին բերման է ենթարկվել ԱՄՆ քաղաքացի Մովսես Բ.-ն, որը 2018 թ. հոկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 266 (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը) եւ 267.1 (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը) հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արմավիրի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ օգոստոսի 17-ին Արմավիրի մարզի Նորապատ գյուղից բերման է ենթարկվել 41-ամյա Վոլոդյա Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 132.2 (մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը), 133 (ազատությունից ապօրինի զրկելը), 142 (անառակաբարո գործողությունները) հոդվածների մեղադրանքով:

◆

Օգոստոսի 17-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Վրաստանի քաղաքացի 47-ամյա Սուրեն Տ.-ն, որը 2012 թ. հոկտեմբերից հետախուզվում է ՌԴ ՆԳՆ Ռոստովի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Գորիլա, շիմպանզե
Քսակ
Հուն. դից. աստված
... Լուսավորիչ
Էստոնացի օպեր. երգիչ
«... Մարիա»
Քաղաք, Լատվիա
Գոյակցի թիվը
Խոփի հետքը
Ավստրալ. ջայլամ
Գյուղ, Աշտարակի շրջան
Բեւեռային ...
Նոտա
Էսպերանտոյի ստեղծողը
Ծառա
Խնկո ...
Դեղնուց
Փարիզի գետը
Լսողութ. օրգան
... Ռավել
Քիմ. աղածին տարրեր
Գիշերն առջեւում է
... Կողբացի
Մոլորակ
Կոնֆետ
...
Ռոդնինա
Աֆրիկյան ճանճ
Հեռուստաալիք
Լիուլի
Հայ քնարերգութ. ժանր
Ամենապարզ օրգանիզմը
Լեհական պար
Մեծ ... համաստեղ.
... Երիցյան
Բանջար
Շնազգի կաթնասուն
Հոլանդ. ֆիզիկոս
Ֆրանս. կարդինալ
... Մոնտան
Գումարում
Փոքր հավ
Մանրակերտ
Ասեղ
Մարգական խումբ
Կրոն. հաստատութ. առաջնորդ
Պարսից շահ
«Խաչագողի ...ը»
Ճապոնիայի դրամ
... Անջափարիձե
... Բրեգվածե
... Զալկա
...
Խրուշչով
Ուսումն. գործընթաց
Աշտե, տեգ
Ոչ հեռու, կողքին
Մետաղ
Սառը զենք
Ռուս բանաստեղծուհի
Պտտվող խաղալիք
Կոնյակ
Սիբիրը նվաճողը
Հայ թագավոր
Ժողովուրդ
... Վլադի
Հայկական տառ
0,3048 մ
Ժամանակի միավոր
Կինոնկարի հենքը
Չեզոք գազ
Պորտուգալացի ֆուտբ.
Ռե, մի
Բարդ-կրճատ սիլլոգիզմ
Ճապոն. 1-ին մայրաքաղաքը
Սասունի կենտրոն. բերդը
Գյուղական կատարածու
... - Կուլ
Հայաստան՝ մարզ, Հունաստան՝ ...
..., սիրտը դող
%
Ֆրանս. քանդակագործ
Խիստ շոգ
Բորիս ... (բռնցք. օլ. չեմպ.)
Սահարա, Գոբի
Լիմա
Օ
Ավտոբուս
Գետ, Իտալիա
Թարթիչ
Դպրության աստված
Հայ գրիչ, մանրանկարիչ
Կաշալոտ
Որտեղ
Ռուս անարխիստ
Պետրոնիոս, վեպ
Հեքիաթի չծնված, բայց մեռած հերոս
Պատմ. ժամանակաշրջան
Բանիմաց, իմաստուն
Հատապտուղ
Թուր

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 23.08 - 29.08

Խոյ - Եթե ժամանակ չկորցնեք, կարող եք լուծել կարեւոր հարցեր:

Ցուլ - Հաջողության կհասնեք մասնագիտական հարցերում՝ լուծելով մի շարք խնդիրներ:

Երկվորյակ - Իրադարձություններով շաբաթ է սպասում: Չի բացառվում, որ զբաղվեք ոչ հաճելի գործերով:

Խեցգետին - Խորհուրդ չի տրվում նոր գործ սկսել. դժվար թե համախոհները, մտերիմները կարողանան օգնել:

Առյուծ - Հանդիպումների, գործնական համաձայնությունների համար շաբաթը բարենպաստ է: Ղեկավարությանը կզարմացնեք ձեր գաղափարներով:

Կույս - Մասնագիտական տեսանկյունից այնքան էլ բարենպաստ շաբաթ չէ, հնարավոր են տհաճ խոսակցություններ:

Կշեռք - Նպատակասլացությունն ու վճռականությունը կօգնեն հասնել լուրջ հաջողությունների. դժվարությունները չեն հուսահատեցնի:

Կարիճ - Հաճախ այնպես չեք վարվում, ինչ սպասում են ձեզնից. դա նույնիսկ կարող է մոլորության մեջ գցել հակառակորդներին:

Աղեղնավոր - Ցանկալի է պահպանեք հանգստություն: Խուսափելք չնախատեսված ծախսերից:

Այծեղջյուր - Կկարողանաք ցույց տալ ձեր իրական հնարավորությունները: Չեն բացառվում հաջողություններ գործնական ասպարեզում:

Ջրհոս - Խորհուրդ չի տրվում կարեւոր հանդիպումներ ունենալ: Կարող եք լուծել անձնական որոշ խնդիրներ:

Ձուկ - Կհասնեք հաջողությունների: Հնարավոր է գործնական հարաբերությունները վերածվեն անձնականի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.e7-f8 h2:f4 2. b6-c7 b8:d6 3.f8:g5x

Խնդիր N2 1.b2-c3 a3:g1 2.a7-b8 h4:f2 3. b8:h2x

Պատրաստեց
ՆՇԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 22.08.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: